ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Նաիրի համայնքի 2023 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին որոշման նախագծի

Ներկայացված որոշման ընդունումը բխում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի <<Նաիրիի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնակատար Մարի Բալյանի 2023 թվականի մարտի 16-ի թիվ 62 և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդի մանկապատանեկան մարզադպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վաչիկ Վարդանյանի գրությունների պահանջից, համաձայն որի համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում Նաիրի համայնքի 2023 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

Նաիրի համայնքի 2023 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին որոշման նախագծի

Նաիրի համայնքի 2023 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին որոշման նախագծի ընդունումը համայնքի 2023 թվականի բյուջեում ենթադրում է 2400.0 ծախսերի ավելացում:Եկամուտների ավելացում կամ նվազեցում չի ենթադրում: